



Նորիկ Անդրանիկի Նազարյանը ծնվել է 1968 թվականի ապրիլի 5-ին Սիսիանի շրջանի Բազարչայ գյուղում:

1989 թվականին ընդունվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ և 1995 թվականին ավարտել է հիշյալ ինստիտուտը՝ Էկոնոմիկայի պետական կարգավորում մասնագիտությամբ: 1986-1988 թթ. ծառայել է Սովետական բանակում:

Նորիկ Նազարյանը մասնակցել է ստրատեգիական կառավարման, ISO որակի համակարգի, կորպորատիվ շփման, իրավիճակային առաջնորդման և մի շարք այլ որակավորման դասընթացների:

1992 թվականի հունվարի 7-ից աշխատել է Հայագրոբանկի Էջմիածին մասնաճյուղում՝ որպես վարկային բաժնի ավագ մասնագետ:

Այնուհետև՝ 1998-ին, նա ընդունվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվ (ներկայիս «Ակբա բանկ» ԲԲԸ), որտեղ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ վարկային գործակալ Կենտրոնական գրասենյակում, ավագ վարկային գործակալ «Արմավիր» մասնաճյուղում, Տավուշի մարզի մասնաճյուղերի պատասխանատու, Կոտայքի մարզի մասնաճյուղերի պատասխանատու, «Արմավիր» մասնաճյուղի կառավարիչ, «Արարատ» մասնաճյուղի կառավարիչ: 2014-ի հունիսի 26-ին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-վարկային տնօրեն: 2015 թվականի հուլիսի 15-ից զբաղեցրել է «Ակբա բանկ» ԲԲԸ-ի ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը, իսկ 2017 թվականի ապրիլի 10-ից նշանակվել է որպես



ՓՄՁ, կորպորատիվ և գյուղատնտեսական բիզնեսի գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

2018թ. ապրիլի 10-ից Նորիկ Նազարյանը ստանձնել է Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի հաստիքը:

Ամուսնացած է, ունի 2 դուստր: